

Գ. Խասսպուրյան

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԸ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

Ռ. Պատկանյանը մեր զրականության մեջ հայտնի է որպես բանաստեղծ, արձակագիր, երգիծարան, ինչոր ուսումնասիրություններ են զբաղեցրել նրա կյանքի ու գործունեության մասին, վեր է հանվել նրա մեծությունը մեր հայ իրականության համար, սակայն ոչ մի խոսք չի ասվել Պատկանյանի բառարանագրական աշխատանքների մասին:

Մեր նպատակը չէ մազաչափ անգամ կրկնելու կամ վերաշոշափելու ու ընդգծելու Պատկանյանի այն հսկայական դերը, որ նա ունեցել է իր ժամանակին բանաստեղծական, երգիծական, հրապարակախոսական գրականության մեջ. մենք միայն ընդգծելու ենք նրա դերը հայ բառարանագրության պատմության մեջ, մի բնագավառ, որ երբեք շոշափված չի եղել, մի երևույթ, որ մինչև այժմ մնացել է ստվերի մեջ և չի ստացել իր արժանի գնահատականը:

Պատկանյանի զրական գործունեության պատկերն ավելի իրական կդառնա, երբ մենք նկատի առնենք նաև նրա բառարանային աշխատանքները, գործեր, որոնք երկար ժամանակ են լիցանվել նրանից, գործեր, որոնք նպաստել են մեր աշխարհարար լեզվի կազմավորմանը, գործեր, որոնք մոռացությունից և կորստից վերկել են մի շարք բառազանձեր, և, վերջապես, որպես բառարանային աշխատություններ հայ բառարանագրության պատմության մի նշանավոր օղակն են հանդիսանում:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ բառարանային աշխատանքը ոչ միայն Ռ. Պատկանյանին, այլև նրանց ամբողջ տոհմին հարազատ ու սիրելի է եղել. հիշենք Բ. Պատկանյանի շնորհներ հայ բառարանագրության պատմության համար և է՛լ ավելի առաջ՝ նույն այդ տոհմի մի ուրիշ ներկայացուցիչ՝ Միքայել Ռիեստեն՝ բժշկի կազմած բժշկական բառարանը, որը լույս է տեսել 1832 թ.: Բառարանը լատին-հայ է, բայց ունի նաև իտալ., անգլ., ֆրանս., հուն., արաբ., պարսկ. և տաճկ. անուններ: Ալիշանը «Հայրուսակը» կազմելիս մեծապես օգտվել է այս աշխատությունից:

Պատկանյանն իր բառարանագրական աշխատանքներն օկեսել է գեո. երիտասարդական շրջանից և միշտ էլ հետաքրքրվել է, որ հրատարակվեն իր այդ գործերը, նրա նամակները մեզ այդ են վկայում, սակայն աշխատանքների մեծ մասը մինչև այժմ մնացել է ձեռագիր և այն էլ մոռացված վիճակում. միայն մի աշխատությունն է լլիվ լույս տեսել:

¹ Ռիեստեն — պարսկերեն՝ պատկաներ

Այժմ ծանոթանանք նախ տպագրված և ապա ձեռագիր բառարանային աշխատություններին և տեսնենք նրանց արժեքը:

Ի. Պատկանյանի տպագրված բառարանային աշխատանքը, այդ «Ժողովածույք օտարազգի բառերի նոր նախիջևանցոյ լեզվի մեջ մտած» գործն է, որ լույս է տեսել Պետերբուրգում 1870 թվին: Աշխատությունը բաղկացած է 32 էջից և պարունակում է շուրջ 1200 բառ-հոդված:

Բառարան կազմելու շարժառիթը եղել է այն, որ երբ Պատկանյանը 1866 թ. Ն. Նախիջևանում դպրոց է բացում, ցավոք նկատում է, որ հայ մանուկների խոսակցական լեզուն լի է օտարազգի բառերով, և ձեռնամուխ է լինում հավաքելու այդ բառերը:

Հեղինակը նշված աշխատության առաջարանում գրում է. «Մինչև փորձով համոզվելս, ես միշտ հաստատ կարծում էի, որ Լթի հայք սկսեն մաքուր հայերեն խոսել, այնուհետև հեշտ կլինի նոցա ոչ միայն հասկանալ իրենց զանազան աշխարհներ և քաղաքներ ցրված ազգակիցների զրույցը և պարզ ոճով գրած աշխարհարար շարագրությունները, այլև ի միտ առնուլ նույնիսկ գրաբար ոճը, որով շարագրված են մեր երանելի նախնյաց զրքերը, որ մենք լսում ենք ամեն օր կարդացած կամ երգած մեր եկեղեցվո մեջը»¹: Եվ ապա շարունակում է. «Երբ որ 1866-ին բացի դպրոց նոր նախիջևանի մեջ, իմ առաջին ջանքը եղավ իմ սիրելի ազգակցաց որդոց խոսակցական լեզուն մաքրելու այն անթիվ, անհամար օտարազգի տարրերեն, որոնք մասամբ մեր սեփական անփութություններով, և մասամբ պեսպես պատմական պատճառներով սպրդելով նոցա առօրյա ընտանեկան զրույցի մեջ և այնտեղ խոր արմատ արձակելով, մեծապես արգելադիմ լին նոցա հասկանալու թե վարժապետաց խոսքը, (որոնք հարկավ պարտական են մաքուր հայերեն խոսել նոցա հետ) և թե նրանց դյուրին ոճով շարադրած դասագրքերը»²:

Պարզ երևում է, որ հեղինակի առաջին և հիմնական նպատակն է զտել հայերեն գրական և խոսակցական լեզուն օտար տարրերից, մի երևույթ, որ հատկապես կարևոր էր 60—70-ական թվականներին, երբ գրական լեզուն արդեն ավելի տեղայնանում, զտվում ու հայկականանում էր: Ժամանակի, 19-րդ դարի խոսակցական լեզուն լի էր թուրքերեն տարրերով: Արովյանի, Պոռոջյանի գործերն ավելի քան 2000 օտար բառ ու ասույթ են պարունակում, նույնիսկ Պատկանյանը սլաշքարելով օտար բառերի գործածման դեմ, ինքն իր մի այլ, նույնպես բառարանային աշխատության մեջ, ստիպված է մերթ ընդ մերթ դիմելու օտար բառերի օգնությանը, իհարկե, չմոռանալով աստղանիշով ցույց տալու օտար լինելը:

«Օտարազգի բառերի հավաքածուն» կազմված է գիտական բնույթով, յուրաքանչյուր էջ բաժանված է չորս սյունակի, ըստ որում առաջին սյունակում գրված է օտար (թուրքերեն) բառը, երկրորդում՝ հայերեն մեկնությունը, երրորդում՝ բացերեն և չորրորդում՝ ֆրանսերեն հոմանիշները, ինչպես.

Ազապ	կույս	девушка	une fille vierge, pucelle
Ազպար	բակ	двор	la cour

¹ Առաջարան, էջ 1.

Ալաշա	գրաստ	маштачок .	la haguenee
Ալեֆ	բոց	пламя	la flamme
Ալա	պարոն, իշխան	барин, господин	monsieur
Եողան	վերմակ	одеяло	la couverture
Թօփ	1. գնդակ	мячик	la balle
	2. թնդանոթ	пушка	le canon
Հախ	1. Իրավունք	право	le droit
	2. վարձ	плата	le paye
Փէշթէշ	ընծա	подарок	le cadeau, le présent.

Բերված օրինակներինց պարզ երևում է, որ այս աշխատությունը առաջին լուրջ փորձն է ցույց տալու թուրքերենի ազդեցությունը մեր ժողովրդական լեզվի այս կամ այն հատվածի վրա:

Աշխատությունը հիմնականում հետապնդում է տալու Ն. Նախիջևանի բարբառում գործածական օտար բառերը և նրանց հայերեն գրական բացատրությունները, միաժամանակ, այս աշխատությունը, հայերենին առնչված չորսլեզվյան՝ թուրքերեն-հայերեն-ռուսերեն-ֆրանսերեն բառարանի մի արժեքավոր փորձ է մեր բառարանային գրականության մեջ:

Նոր Նախիջևանի հայկական խոսվածքում գործածական օտար բառերի բացատրությունները ռուսերեն և ֆրանսերենով գրելը նշան է, որ հեղինակը չի հետապնդել միայն նեղ զպրոցական նպատակներ և կամ իր հայրենակիցներին օժանդակելու, որպեսզի նրանք խուսափեն այդ օտար բառերից և «խոսեն մաքուր հայերեն», այլ նա աշխատել է գործին տալ գիտական բնույթ, աշխատությունը դուրս բերել անձուկ միջավայրից և դարձնել մյուս կուլտուրական ժողովուրդների սեփականություն: Ավելի քան երեք տասնամյակ հետո, հիմնականում, նույն մեթոդը կիրառեց Հ. Աճառյանը, կազմելով իր «Թուրքերենի փոխառյալ բառերը և Պոլսի, Ղարաբաղի, Վանի և Ն. Նախիջևանի խոսվածքներում» աշխատությունը, որի առաջարանում՝ ոչ անաչառ կերպով գրում է.

«Հայերենի մեջ թուրքերենի փոխառյալ բառերու վրա ոչ մի աշխատություն չէ եղած դեռ ոչ հայերեն և ոչ ալ եվրոպական լեզվով... Այժմարիտ է թե Պոլսո, Վենետիկի կամ Վիեննայի մեջ այլ և այլ ժամանակներ հրատարակված են ոամկորեն հայերեն մեծ ու փոքր բառգրքեր, որոնց մեջ հավաքված են ժողովրդական լեզվին մեջ գործածական խումբ մը թրքական բառեր և անոնց դիմացը նշանակված հայերեն թարգմանությունը, բայց այս աշխատությունները ոչ մի գիտական արժեք չունին»,¹ և ուրիշ ոչինչ:

«Օտարազգի բառերի հավաքածու»-ի վերջում կցված է չորսհարյուր

ամյա օրացույց, որ ՀՄԽ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի I-ին հատորին կցված ձեռնգրության օրացույցի տեսքն ունի:

Պատկանյանի բառարանային մյուս աշխատություններն անտիպ են

կամ թերատիպ:

Հեղինակի հաջորդ բառարանային աշխատությունը նրա «Ռուս-հայերեն բառարան»-ն է: Պատկանյանի արխիվում ռուս-հայերեն երկու ձեռագիր

¹ Հ. Աճառյան — Թուրքերենի փոխառյալ բառեր հայերենի մեջ, Մոսկվա — Վաղարշապատ, 1902 թ., էջ 12:

անաւարտ բառարան կա, մեկն ընդարձակ, մյուսն ավելի համառոտ, և մի երրորդ ձեռագիր՝ ուսուհայերէն լրիւ բառարան։ Հեղինակի նամակներէց պարզվում է, որ նա իր այդ լրիւ բառարանը կազմած է եղել շատ ավելի առաջ, քան այդ գրութիւնն աշխատութեան վրա (1881)։

Ռ. Պատկանյանը իր Ռուս-հայ բառարանը ուղարկում է Վերձագանք-ի խմբագիր Արզար Հովհաննիսյանին տպագրութեան համար, սպասում մի ամբողջ տարի, սակայն ոչ մի պատասխան չի ստանում։ 1882 թ. նոյեմբերի 2-ին Ա. Հովհաննիսյանին ուղղած նամակում կարդում ենք. «Ի՞նչ վիճակի մեջ են քառաքանն և մանավանդ այրբենարանս, մի՞թէ հալիտյան զընագիր վառյալն պիտի մնան և մի՞թէ այն հեղինակութեանը, որ անդադար տեղի ունէր 20—30 մանուկների տակ են մտնում անասնման վեր են իմ աշխատութեաններն, որոց վրա այնքան անքուն գիշերներ էի անցուցել»։¹

Ռ. Պատկանյանը երկար, անքուն գիշերներ է անցկացրել այդ աշխատանքի վրա և իր Վերձագանք բառարանը համարում է իր ամենալավագույն գործը ու միակ հարստութեանը։ Վեղնիւլ բարեկամ,— գրում է նա Ա. Հովհաննիսյանին,— Ռուս-հայ բառարանս, որի վրա երեսուն տարի աշխատել եմ (այդ բոլոր աշխարհ գիտեմ, տակալին Պետերբուրգում, ուսանողութեան օրերից) և մեկ ու կես միայն պարզապէս եմ, լսել եմ անհայտացել է. այդ իմ միակ հարստութեանս էր աշխարհիս ևրեսին, ուրիշ ոչինչ չունեմ, բացի Ք զավակն, որոց վրա միայն ունեմ ծախք, ծախք և ծախք. կրկնում եմ, այդ բառարանս ես քեզ էի հաւատացել ինչպէս մի մեծահոգի և մեծատուն երիտասարդի և որ այժմ կորել է... մի՞թէ շատ մեծ պահանջմունք է, եթէ ես նշանակեմ նրա համար միայն հինգ հարյուր ռուբլի Աստիճան բացասիրտ և անբերկշուք՝ մտադիւր ևս ինձ վարձատրել, թե պիտի թողուս ինձ զրկած...

Շատ կպարտավորեմ, եթէ ինձ երկտող պատասխանով միամտացնես։ Հաւատա, այլևս չեմ պատճառիլ քեզ զլիազաւորութեան ոչ խնդիրքովս և ոչ տրտունջովս։ Քնդրում եմ, խնդրում եմ և դարձյալ խնդրում եմ մի տանջիլ անհայտութեամբ, շտապեմ ուղարկել այդ կամ ոչդ»։

Այդ օրից անցնում է երեք ու կես տարի։ Հեղինակն իր բաղմանդամ ընտանիքով անհամբեր սպասում է թայտ կամ ոչ պատասխանին, սակայն բառարանի ձեռագրի շուրջը լուրեր են պտտվում թէ կորել է, անհայտ է և այլն։

Ռ. Պատկանյանը զգում է, որ բանիմաց մարդիկ զոգացել և կողոպտել են իր երեսուն տարվա աշխատանքը։ Այդ կապակցութեամբ նամակներով մի շարան է հասցեագրում Փիլիպպոս Վարդանյանին հետաքրքրվելու և իրական վիճակը պարզելու համար։ «Երեւոյ սիրական փիլիպպոս,— գրում է Պատկանյանը 1884 թ. նոյեմբերի 6-ին,— որ շարունակելու (նամակս) ուժ չունեմ, սաստիկ վշտացած և վճատած եմ։ Ի՞նչ գիտեմ ինչ է նշանակում երեսուն տարի մեծամեծ հուշներով մի բանի վրա աշխատել և վերջավորութեան իմանալ, որ աշխատանքդ իզուր կորած է։ 52 տարեկան հասակիս մեջ մին էլ Երբ պիտի կարողանամ այդպիսի մի բան գլուխ բերել»։

Մի քանի նամակներում պարզում է իր աշխատութեանը կազմելու

¹ Ինքնաձեռագիր նամակներ Ռ. Պատկանյանի, 1848—1891, Գրական թանգարան, Պատկանյանի արխիւ, գործ № 270, էջ 421։

² Նույն տեղ, էջ 425։

³ Նույն տեղ, էջ 340։

հանգամանքները, իր բառարանի առավելությունները, միաժամանակ քրն-
նադատություն չի ցուցաբերում։ Երեցփոխյանի «Թուս-հայերեն բառարանը»
«Պարոն Արզարը իբր թե ասել է,—գրում է Պատկանյանը ֆիլիպպոս
Վարդանյանին,—որ իմ բառարանը ներեցփոխյանից վատ է, չոթար եմ,
զիցուք թե դու մի տուն ունես, և այդ տունը ֆիլան աղայի տնեն վատ է։
Մի՞թե այդ կարծեցած վատությունը քո տան՝ մի երրորդ պարոնի իրա-
վունք է սալիս քո տունը այրել կամ կործանել։ Երեթե բոլոր հայոց զրա-
կան և աշխարհարար զրքերը ծայրի ծայր կարդացել եմ և այդ բառա-
րանի մեջ եմ մտցրել, Հայկաղյան բառարանը ծայրի ծայր անցել եմ և
եթե համապատասխան բան գտել եմ՝ դարձյալ այնտեղ մուծել եմ։ Ինչպիս
կարող էր նա վատ լինել, ես հավատալ չեմ ուղում։ Իսկ եթե հայոց լեզուն
լմբոնած չէ այն ոճերը և արվեստական բառերի համապատասխանները, որ
հային անհայտ կյանքի և զարգացման (ջնջված), այդ իմ մեղքը չէ, իմ
բառարանի մեջ, այո, չիկային սե ձուկ ինչ, է թուղուն ինչ, է զործի ինչ, է ծառ
ինչ և այլն, որով ճոխացած է ներեցփոխյանը, այդ է ուրեմն նորա զերա-
զանցությունը և իմի վատությունը։ Զարմանալի քննադատություն։ Այս-
տեղ ևս չեմ ուղում վեճ բանալ իմ աշխատանքի վատության և ուրիշինի
լավության մասին, ես ցավում եմ, որ մեծ հույսերս (թող լինեն նրանք
անձնախար հույսեր, խոլական ցնորքներ), որն տածել էի մեջս, մի բուպե-
ուսն ցնդում են և ինձ թողնում են անմխիթար, անհարակ վիճակի մեջ»¹
Եթե նույնների ճիշդ դրած ներեցփոխյանի բառարանի քննադատականը
Պատկանյանի կողմից որոշ չափով ինքնապաշտպանողական բնույթի ունի,
այսպես «նույն»՝ Վարդանյանին ուղղած նույնների 24-ի նամակում քննադա-
տությունը ուղղակի հարձակողական բնույթի է ստանում։ «Այսօր ամսույս
24-ն է. կնշանակե պարոն Արզարը, յուր խոսքին համաձայն, պիտի ճա-
նապարհ ձգե իմ բառարանը, որ երեք ու կես տարվա ունայն գերություն-
նեն ետ կողոպտված ձեռքս պիտի ընկնի քանի մի օրեն։ Ինչ անես, այս
է ներկա զարուս թշվառ հայ զրազետի վիճակը։ Ես բառարանս համարում
եմ կողոպտված այն պատճառով, որ, կարծում եմ, ասլաբաց բարեկամներս,
հնարը չիկա, նորա միջից քաղվածք արած պիտի լինեն իրենց ապագա
նույն ազդի ներկասիրության համար։ Ես որ քեզ ասում եմ երեսուն տարվա
աշխատանք, իդուր չեմ արժեքը միծացնում իմ փութրիկ աշխատանքիս։
Նորա մեջ այնպիսի հաղվադյուտ բաներ կան, որ միայն երեսուն տարվա
հետախուզության արդյունք կարող էին լինել, որի՞ ձեռքից այնքան զրքեր
անցել է։ Ինչպիս իմ, թվ իր ամեն կարգացած զրքեն հարկավոր քաղ-
վածքներ անելու ծուլացած չէ և նույն հետայն մուծել է նախապես պատ-
րաստած սովոր տևյալներու մեջ. ով յուր ամեն օրվա լսածը իսկույն թղթի
անցուցել է այն դիտմամբ, որ մի օր էլ յուր լույս ընծայելու բառգրքի
մեջ մուծանե։ Բառարանն բառարան թափելը շատ դյուրին գործ է, քանի
մի ամսվա գործ, ոչ ավելի։ Բայց իմ համառոտ բառարանը այդպիսի թեթե
աշխատանքի արդասիք հղած չէ։ Մարդիկ լրբություն ունեցել են
ասել թե՛ ներեցփոխյանի բառարանը իմից զերազանց է։ Մի՞թե լսած չէ՞ի,
որ ներեցփոխյանի բառարանը 50 թվականներին հայրս ուղղում և լրացնում
էր՝ բառի գլուխ մի կուպեկ վարձով, որ յուր քաղցած գերդաստանը կերա-

¹ Նույն անդ, էջ 340—341։

կրեւ երեցփոխան... Լաղարյան ճեմարանի երկրորդ դասարանից ղուբա եկած աշակերտ... և հայոց բառարան... ուր է ճշմարտութիւնը... Ո՞ւր է ղնահատութիւնը... Այդպիսի մարդիկ պիտի լինեն 61 հոգիաձի զուէի բերողները, հայոց ազգի ՏАНКЕВИЧ-ները, ... Ես երբեք մտքով չէի անցկացնիլ, որ մարդոց իշտահը կրացվի իմ ծոցես փող զողանալու, ուր ամեն մի կռպեկի վրա ութ անմեղ երեխաների հուշներ են զրած... Իմ կռպեկները չեն մխսվում լավ երեկույթի, թատրոնի, բազկաթոռի, լայրա թաթմանների համար, ոչ իմ փողով զնվում է հաց, միս և մերկութիւնս հաղիվ ծածկելու հալով... Ավելի ներելի էր Քրիստոսի քղամիղը զողանալ, քան թե իմ կռպեկը, վատն զի առաջին զիպվածութիւն միայն մի անձն մերկ պիտի ծնար, իսկ երկրորդութիւն՝ ինն անձինք... Ամոթ, ամոթ, ամոթ... Ինչ և իցենք մի. Պատկանյանը պաշտպանելով իր բառարանը, գտնում է, սակայն, որ չի կարելի այն անթերի համարել. «Կասկածս կասկած է. նոքա ժամանակակիցներ նշանակելուց շտապեցնում են պարզագրողին ավարտելու. ես համոզված եմ, որ երբ բոլորովին քամեն (ղուբս գրեն), ձեռագիրը ինձ կվերադարձնեն, Իսայի աղ կնշանակե պահ տված քսակի մեջն ոսկիները հանել և քսակը վերադարձնել տիրոջ: Երբ որ ես պարծենում եմ երեսուն տարվա աշխատանքով, այդ կնշանակե, որ ես երեսուն տարի ստուգել եմ ճշտութիւնը բառերուն, ամեն տեսակ թարգմանութիւնն ենթարկել եմ, հազար անգամ փոխվիսել եմ, հազարավոր դրքերի քաղվածք եմ արել և հազարավոր բերանների քաղել եմ: Զեմ ասում, որ նա մի խորին գիտնականի դործ է, ոչ (և որոնք են, ուր են մեր այդ գիտնականները), բայց ինչ զանձ որ ձեռքս ընկել է՝ ամենից հավաքել եմ ինձ պետքակալն: Կարող ես հալատալ, թե ասեմ, 1910 տարի համբերութիւն եմ ունեցել վիենտիկ մեծ բառարանները ծայրե ծայր կարդալու և համանշան բառը բուսերենում գտնելուց՝ իսկույն իմ համեստ բառարանիս մեջ մուծանելու: Իմ բառարանիս մեջ գրեթե չիկա է ձուկն ինչ, է հալ ինչ, է բույս ինչ, — շատի նշանակութիւնը գտել եմ կամ հին բառով. կամ միջնադարյան կամ ժողովրդական և կամ նորաստեղծ: Ես համոզված եմ, որ նա այս բոլորիս զբաղում է մի բան հասկացող մարդու ձեռք և արտադրվում է, ապա թե ոչ՝ եթե նրան մի անպիտան բան համարած լինեին, վաղուց կվերադարձնեին ինձ... Ես այն էլ գիտեմ, որ իմ շինածս համառոտ է, որ միայն 25. 000 բառ ունի բուսաց, մինչ լիակատարը պիտի ունենար զոն 75. 000: Բայց այդ էլ իմացիր, որ ցնացած 50. 000 զրելը շատ հեշտ է, մասամբ պիտի աւելանան է մեքենա ինչ, է գործի ինչ, մասն ինչ մանգղիոնի, մասն ինչ նալու, և այլն և այլն: Նմանապես լրացնել այն բառերով, որոց մի համանունը արդեն կա իմի մեջ, զորորինակ путешествие, боят, авантюрист (անընթեռնելի) և այլն, որոցմե, դիցուք թե միայն միւնը կտ իմ բառարանի մեջ. իսկ լիակատարում կա երկուսն էլ: Բայց այդ չի ցույց տալիս իմ բառարանի թերութիւնը բան հասկացող մարդու աչքում: Իսայի թրպիսի տարբերութիւն է, եթե ես Эшафот, манёвры, эксельбанды և այլն և այլն հանած լինեմ ոչ թե բառարանե, այլ մի դիզեցիկ թարգմանութիւն:

Հասկանում ես ինչ ուղում եմ ասել: Ահա այդպիսի զիպվածներումն անփոխարինելի էր իմ բառարանը: Իսայի ալմ, երբ նորա արտագրել են, երբ ես մոտ ժամանակումս ուժ չունեմ տպելու, իսկ նոքա ունեն՝ իհարկե

ես ընդորովին կողոպտված եմ: Ես ինչպես ապացուցանեմ, որ այս ինչ բառը կամ սեռը ես եմ գտել և ոչ ուրիշ ոք, մի՞թե (ինձ կհարցնե լիբրոգոդը) այդ զրքերը քո ձեռքն են ընկել, իսկ իմը ոչ: Իմ պատասխանը de facto կլինի արդարացի, իսկ de jure ոչ, ամիթե հատկապես դու հենց այն բաների վրա ուշք դարձուցիր, ոչոք վրա որ ես, միթե հատկապես այդ զրքերը քո ձեռքն ընկան, ինչ որ իմ, դորա համար պետք էր 30 տարվա աշխատանք՝ և այլն և այլն: Բայց այս փաստերս չեն ընդունել ոչ օրենքը և ոչ այժմվա թեթեւեղ հայերեն սովորողք...»¹

Իր թշվառ բառարանի կողոպտման և վերադարձման կապակցութեամբ ասում է, որ հյուսիս քամել են և հետո ուղարկել իրեն. «Քամած լիմոնը ես ինչ անեմ»,—գրում է Պատկանյանը 1884 թ. դեկտեմբերին Փ. Վարդանյանին ուղղած նամակներից մեկում:

Ռ. Պատկանյանը սրտատրոփ սպասում էր իր «Տիկին և նաժիշտ» զբոսովածքի տղազրութեան համար 50 մանեթ գումարի, բայց նոյեմբերի 11-ին իմանում է, որ փողի փոխարեն ուղարկվել է իր լրագրանքը:

«Երեկ ինձ մոտ էր,—գրում է նա Վարդանյանին,—մեր ընդհանուր սիրական Օլգա Սեմյոնովնան, նա ինձ ասաց, որ իբր թե պարոն Արզարը արդեն ուղարկել է թշվառ բառարանը, ժամանակին նայելով՝ ես արդեն վաղուց ստացած պիտի լինեի, մինչ, հավատացնում եմ Ձեզ ամենայն սուրբերով, որ ցայսօր բառարանիս հոտն անդամ զգացած չեմ, ոչ թե ստացած, Բայց իմ պահանջելիքը միայն բառարանը չէր. երեսայքս КАЗКОРОВА ЛЕТА, սպասում են նաև հիսուն ժանեթի, որն նոցա պիտի բերե տոն և զատիկ, ինչու խնդիրն այդ մասին լուծւմ է: Սպասում եմ, սպասում եմ և սպասում եմ»:²

Դեկտեմբերի 14-ին, երբ արդեն Պատկանյանը զգողված վիճակում, ինչպես ինչո՞ն է ասում, «եղարապայով» ստանում է բառարանը, գրում է. «Երեկ, ամսույս 13-ին, ստացա իմ թշվառ բառարանը ետ երկամյա գերությանը: Մեծապես և հատկապես շնորհակալ եմ Ձեզ այս վերադարձութեան համար, ապա թե ոչ՝ այն հավիտյան կորած պիտի լինեի ի՞նչ և անմասն: Ինչպես որ ամեն բառարան, որ ուսումնաստենչ աշակերտի ձեռք քրքրվում և մաշվում և կեղտոտվում է, այնպես էլ իմ ձեռագիրն էր, թեև, ինչպես կասեն С ИГОЛОЧКИ ուղարկել էի, նոր արտագրած, նոր կաղմած և կաղմը չի նմարվելու համար՝ արկղի մեջ գետեղած: Փռելով չէ՛, որ երկու ամբողջ տարի դա ինչպես մի մակաւեղանւյա գիրք եռանդով կատարել է յուր սուբը պաշտոնը (ես հենց դրա համար էլ ուշխատասիրել էի և այդ է իմ պարծանքը): Բայց ինչու հայկական բժախնդրությունը արատել է նորան իբր մի շնչին ինչ... Որ դա կատարյալ չէ՛. ես ինքս առաջինը կվկայեմ, բայց որ եղածներեն ընտիր է՝ այդ ևս ամեն բարեխիղճ և բանիմաց մարդ կվկայե... Երեի իմ քննադատները ոչ խղճմտանք ունեն և ոչ բան են իմանում: Մանրաս»:³

Պրպտուեմերը պարզեցին, որ այդ բառարանը նույնիսկ սկսել է տպագրվել, բայց մնացել է անկատար: Լուգարյան ճեմարանի արխիվում

¹ Նույն տեղ, էջ 360.

² Նույն տեղ, էջ 340.

³ Նույն տեղ, էջ 354.

պահվում է տպագրված բառարանի 1-ին պրակը¹ 1—16 էջ: Պրակի վրա ձեռքով զրված է. «Образчика печати студента Рафаель Патканова 1860» Պրակն ընդգրկում է 600 բառ-հոգված: Տպագրված մամուլի ծավալից դատելով, կարող ենք ասել, որ աշխատանքը պետք է ընդգրկեր շուրջ 25,000 բառ-հոգված, կազմելով մոտավորապես 700 էջ աշխատություն¹ 16,5X11 սմ չափով:

Բառարանի առաջին էջի վերևում տպված է «Русско-Армянский словарь Иосиф-Зав. Раткович»:

Տպագրված պրակը սկսվում է.

«А, ադ, բայց, այլ, սակայն, իսկ, 2. նույնպես, նմանապես»:

‘և վերջանում.

«Бездушные անխղճություն, անզիթություն, -шник անխիղճ, անհոգի, անզուրկ, -ничать, շարժել, գործել ընդդեմ խղճի մտաց, անզիթությամբ, -нн-чество, տես -души»:

Հեղինակը գիտակցելով, որ երբեմն գրական հայերենով տված մեկնությունները կարող են անհասկանալի մնալ ավելի բայն մասսաների համար, թարգմանությունն բաժնում տալիս է նաև թուրքերեն բառեր, վերջիններն առնելով փակագծերի մեջ և հատուկ աստղանիշով ցույց տալիս օտար լի-նելը, ինչպես.

Аграф,	ճարմանդ	(*զոփչա)
Айва,	սերկևիլ	(*հայլա)
Аист,	արագիլ, տառեղն	(~լազլազ)

Բառարանի բացատրական բաժնում երբեմն հանդիպում ենք բարբառային բառերի, զարգյալ աստղանիշներով, ինչպես.

Абрикос,	ծիրան,	*պառկուկ	(դայիսի, դերդալը)
Аршин,	կանգուն,	կանգնաչափ	*կալ
Бабочка,	թիթեռն,	*ալուրմաղիկ,	*խպլիկ
Барыня,	տիկին	(*խանըմ),	*աղջիկպարոն և այլն:

Բառարանի տպագրված հատվածում բացակայում է համառոտագրությունների բացատրությունը, բայց կարելի է ենթադրել, որ հեղինակը աստղանիշով տալիս է ժողովրդական, խոսակցական ձևը, միևնույն ժամանակ չհանձնարարելով գործածությունը:

Բառարանում մեծ մասամբ տված է բառին բառ բացատրությունը, իսկ երբ այդ անհնար է եղել, կամ ավելի ճիշտ, հեղինակին թվացել է պակասավոր, գիմել է բացատրությունների.

Август,	օգոստոս, նախասարգ (ամիս).
Адажно,	հուշիկ (ըստ երաժշտաց).
Безветрие,	հանդարտություն (օդո, հոգմո), անհոգմություն.
Батёр,	անմորուք (բույս).
Ангиология,	անոթաբանություն (մասն ինչ բժշկություն) և այլն:

¹ Այս նյութի ակզը մեզ մատնացույց արեց պատմ. գիտ. թեկնածու ընկ. Վ. Պարսամյանը, որին և հաշտում ենք շնորհակալություն:

Ռուս-հայերեն ձեռագիր զույգ թերի բառարանները նույնանմուշ բառարաններ են, կազմած ավելի ուշ ժամանակներում:

Ռուս-հայերեն ընդհանուր բառարանների կոլեքին մենք հանդիպում ենք նաև մասնակի ընդլթ կրող՝ կենդանաբանական և բուսաբանական ընդլթի բառարանային աշխատություններին:

Պատկանյանն ապրելով մի ժամանակաշրջանում, երբ կադավորվում և հիմնավորվում էր հայերեն աշխարհարար դրական լեզուն, լրիվ կերպով գիտակցել և ձևանալու է հղել այդ լեզվի դարդացմանը:

Հեղինակը ազգային ինքնագիտակցության հետ իմացել է. որ անհրաժեշտ է կազմել մասնագիտական բառարաններ, ժողովրդի ծոցից հավաքել կենդանական և բուսական աշխարհի հարյուրավոր անունները, ճշտել նրանց գիտական անունները և դուրս բերել լայն օսպարեզ, մի կողմից՝ այդ բառերը փրկելու կորստից և մյուս կողմից՝ համայն հայության սեփականություն դարձնելու: Սակայն, ցավոք, պետք է նշենք, որ այդ կարևոր ձեռնարկում իր ժամանակին արձադատք չի գտել, չի խրախուսվել և մինչև այժմ էլ այդ բացը նկատելի է մեր գրականության մեջ: Մինչև հիմա էլ մենք չունենք մի կատարյալ բուսաբանական բառարան: «Հայրուսական»-ը, ինչպես բազմաթիվ համոզիչ փաստերով ցույց է տվել Ն. Բյուզանդացին, լեզուն է սխալներով, իսկ կենդանաբանական բառարանը ընդհանուր չունենք: 1900-ական թվականներին հասունել կոչ եղավ բուսաբանական բառերի հավաքման ուղղությունը, նույնիսկ կատարվեցին որոշ փորձեր, սակայն միացին անհետևանք: մինչդեռ այդ չափազանց կարևոր դրած է և մեր ժողովրդական բուսաբանական և կենդանաբանական բառերը ենթակա են կորստյան: Այդ կապակցությամբ Տաշյանը գրում է. «Ժողովրդական բառեր (բուսաբանական, հանքային և այլն) պակաս չունենք մենք ալ: Բայց անոնց նույնիսկ հավաքուժը լիովին ավարտված չէ, իսկ գիտական ճշտման փորձեր թեև եղան, բայց միացին անհետևանք»¹ Նույնիսկ «Իրական»-ը 1899թ., 41. էջ 656 «Հրավիր մը» խորագրի տակ կոչ էր անում գիտական քննությունը ժողովել գավառական բույսերու անունները, նրանց վրա եղած ավանդությունները և ինչ բանի համար օգտագործած լինելը:

Ռ. Պատկանյանի բառարանագրական ամենաարժեքավոր գործը պետք է համարել նրա «Բերք Հայաստանի» աշխատությունը, որը երեքլեզվյան՝ հայ-լատինոսերեն բուսաբանական բառերի բառարան է, ընդգրկում է այրենական կարգով դասավորված 700 բառանուն, ինչպես.

Ազոավաթուր	gladialus	шпажник (բույս)
Ազոավաճանկ վայրի	serpentaue	բանջար է.
կամ նեղատերև	mathlola	
Անանուխ	menta	мята
Աղինջ, Լղինջ	urtica	крапива
Բալախ, չօգան	sahlornia	солянка
Դարնի	laurus	лавр
Դաղձ	menta sulvestris	полевая мята
Դամոն, սալոր, շլոր	prunus	слива

¹ Հ. Տաշյան - Բառախոսական գիտությունների հայերեն գիտական լեզվի մասին, «Հանդես ամսօրեայ», 1925 թ. էջ 59.

² Պատկանյանի արժիվ, գործ № 109.

Դդուճ	cucurbita	тыква
Դեղձ	malus persica	персиковое дерево.

Մի շարք ղեպերում զրված է միայն լատիներենը և հայերենը, ինչպես.

Քրցակ	bromos herba
Կղմուխ	helenium

Կարծում ենք՝ այժմ կան բոլոր նպաստավոր պայմանները հավաքելու բոլոր բույսերի ժողովրդական անունները, ճշտելու նրանց դիտական անվանումը։ Այդ աշխատանքները կատարելու համար պատրաստի մեծ նյութ է մասնագետների համար Ռ. Պատկերաբանի «Բերք Հայաստանի» աշխատությունը, որ մինչև այսօր, ի ցավ, մնացել է ձեռագիր և մոռացված վիճակում։

Բառարանային զրականություն պետք է համարել նաև Պատկերաբանի մի ուրիշ ձեռագիր աշխատությունը, որ կրում է «Классификация животного царства»¹ խորագիրը։ Եթե «Բերք Հայաստանի»-ն բուսաբանական բառարան էր, ապա այս վերջինը կենդանական աշխարհի բառարանն է։ Ձեռագիրը իրենից ներկայացնում է մի ցուցակ, որ տրված են կենդանական աշխարհի անունները ռուսերեն և լատին լեզուներով, շատ հաճախ նաև հայերեն, հիմնականը ռուս-լատին մասն է։

Ռ. Պատկերաբանը կենդանական աշխարհը բաժանում է 3 խմբի. 1. կաթնասուններ, 2. թռչուններ, 3. մնացած այլ կենդանիներ. յուրաքանչյուր բաժին բաժանված է 30 ենթախմբի և յուրաքանչյուր ենթախումբը ներգրկում է 2-ից մինչև 25 կենդանական անուն։ Առաջին բաժնին ունի 130 անուն, 2-րդը՝ 193 և 3-րդը՝ 316 անուն, ընդամենը 639 կենդանական բառանուն։

«Классификация животного царства» ցուցակ-բառարանի մասին ավելի կոնկրետ տեղեկություն համար, որպես նմուշ, վերցնենք բոլոր բաժինների տասերորդ ենթաբաժինները ամբողջությամբ.

I բաժին, X ենթաբաժին

a. Шакал,	c. aureus,	շնագայլ, ոսկեգույն գայլ
в. Лисица,	c. vulpes,	աղվես
c. Еж,	crinaceus europaeus,	ոգնի
d. Землеройка,	sorex araneus,	սրաքիթ ² մուկ
e. Кутора вод- яная,	s. foedlens,	ջրային սրաքիթ մուկ
f. Карлида зем- леройка,	s. pigmaeus,	զաճաճ սրաքիթ
g. Крот,	talpa,	խլուրդ

II բաժին, X ենթաբաժին

a. Серая ворона,	c. cornix,	գորշ ագռավ
в. Галка,	c. monedula,	ճայակ

¹ Պատկերաբանի արխիվ, № 107.

² Ռուս-հայերեն բառարանում землеройка թարգմանված է նրբաքիթ մուկ։ Ք.Պ.:

с. Кедровка пес- трая, ореховая,	с. glandulariu,	—
d. Еловая сойка,	с. caryoca- tactes,	եղևն ազոավ:
e. Клушница аль- пийская,	с. alpiense,	ալպյան ճայակ:
f. Клушница обычн.,	с. graculus,	ապառաժի ճայակ:
g. Сорока,	pica,	անծեղ:
III բաժին, X ենթաբաժին		
a. Морской орел,	raya aquila,	արծվաձուկ:
b. Электрический скат	r. torpeda,	թմբաձուկն, նէրկէս:
с. Иглистый скат,	r. rubus	—
d. Морская минога	petromyzon marinus,	ծովի քարադյաց:
e. Речн. минога	petr. fluviatiles,	գետի քարադյաց:
f. Рученн. минога,	p. pluneri,	առվի քարադյաց:
σ. yle,	—	—

Բ. Պատկանյանն ընդհանրապես սիրել է բառարանային աշխատանքը. նրա դործերի մեջ հանդիպում ենք զանազան թերթիկների ու ցուցակների,¹ որոնց վրա գրված են երբեմն ուսուցիչներ, երբեմն ֆրանսերեն, հայերեն, թուրքերեն ու բարբառային բառեր՝ իրենց բացատրություններով: Այսպես, մի թերթիկում գրված է 235 բառ, մեծ մասամբ թուրքերեն, հայերեն բացատրություններով, ինչպես.

Թեքիճի—կոշկակար, հնակարկատ
Հէշ օլմասա—զոնե
Դահա—ալիս
Կեննուտ—երիտասարդութուն
Էպփեյի—բավականին
Թէմել—հիմն
Ֆոդ—հող, երկիր:

Այլ ուրիշ թերթիկում ուսուցիչներից հայերեն.

Кусачки—աքցան սրաբերան
Пила—սղոց
Сапожный нож—կոշկադանակ:

Այլ երբորդ թերթիկում ֆրանսերենից հայերեն.

Meleze—պտղի
Desole—վշտահար
Serré—հոծ
Brassard—բազպան
Jambard—սոնապան
Superbe—սիրապանծ

¹ Պատկանյանի արխիվ, № 110:

Bord—*եղեղք*
Basone—*սերեկ*։

Նույն թերթիկում մերթ ընդ մերթ նաև ողեսերեն բառեր։

Капля—*կալլակ*
Корм—*խար և ալլն*։

Մի ալլ թերթիկում տրված են պտուղների անունները և հայերեն անուններով և այսպիսի շատ աշխատանքներ։